ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 19.02.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-ԷՍ-2019/16

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 18.01.2019թ. թիվ 26-3/569-19 գրությամբ «Էմ Դի Էյջ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02250199) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 14.01.2019թ. թիվ ԴՎԱ/57 գրության հիման վրա, 18.01.2019թ. նախաձեռնել է «Էմ Դի Էյջ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 14.01.2019թ. թիվ ԴՎԱ/57 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «Էմ Դի Էյջ» ՍՊԸ-ի միջև 23.05.2019թ. կնքված ՈԳՀԾՁԲ-7/5-1 և ՈԳՀԾՁԲ-7/6-1 գնման պայմանագրի 2.1.3 կետի բ) ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2018թ. դեկտեմբերի 27-ին միակողմանի լուծել է ՈԳՀԾՁԲ-7/5-1 և ՈԳՀԾՁԲ-7/6-1 գնման պայմանագրերը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ վերոնշյալ պայմանագրերի լուծման վերաբերյալ գրությունը հրապարակվել է www.gnumner.am ինտերնետային կայքում»:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Բողոքներ քննող անձի կողմից 25.01.2019թ. ժամը 15:40-ին, 01.02.2019թ. ժամը 15:00-ին, 14.02.2019թ. ժամը 14:30-ին, 19.02.2019թ. ժամը 15:10-ին հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ապահովել որևէ լիազորված ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

3. <u>«Էմ Դի Էյջ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Էմ Դի Էյջ» ՍՊԸ-ն 08.02.2019թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Համաձայն 2018թ. մայիսի 23-ին կնքված ՈԳՀԾՁԲ-7/5-1 և ՈԳՀԾՁԲ-7/6-1 պայմանագրերով մեր ընկերությունը պարտավոր էր մատուցել պայմանագրով նախատեսված ծառայությունները: 2018թ. օգոստոսի 1-ից մեր ընկերությունն արդեն իսկ ամբողջ հզորությամբ սկսել է վերոհիշյալ պայմանագրերով նախատեսված աշխատանքների կատարումը, աշխատակիցները մուտք են գործել ք. Գավառում և ք. Աբովյանում գտնվող զորամասեր և կատարել ՈԳՀԾՁԲ-7/5-1 և ՈԳՀԾՁԲ-7/6-1 պայմանագրերով նախատեսված արատորոշման՝ ուլտրաձայնային մեթոդով ստուգման, եռակցման հորիզոնական և ուղղահայաց կարերի արատորոշման ծառայությունները, որը եղել է երկարատև և դժվարին աշխատանք: Վերոնշյալ արատորոշման ծառայությունները կատարելուց և պայմանագրերով նախատեսված ծառայությունների ծավալը հասկանալուց հետո, մենք բանավոր տեղեկացրել ենք ՀՀ ԶՈՒ ԹՎ և Վ ծառայության պետ Կարեն

Մխիթարյանին, ՀՀ ԶՈՒ ԹՎ և Վ ծառայության ք. Աբովյանում գտնվող զորամասի հրամանատարին և ք. Գավառում գտնվող զորամասի հրամանատարին: Վերջիններիս անձամբ տեղեկացրել եմ, որ N ԳՀԾՁԲ-7/5-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում պետք է փոխարինվեն թվով 6 հատ 200խմ տարողությամբ ռեզերվուարների հատակները ամբողջությամբ և ԳՀԾՁԲ-7/6-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում պետք է կատարվեր 50 և 75 խմ ամբարների կողային մասերի թիթեղների հղկման աշխատանքներ և այդ բոլոր աշխատանքները պետք է կատարվեին զորամասի տարածքում, քանի որ բոլոր ստանդարտներով 200խմ տարողությամբ ուղղաձիգ տարողությունները հնարավոր չէր և չի թույլատրվում ամբարձիչով բարձրացնել և տեղափոխել տրանսպորտային միջոցով: Նշեմ, որ տարածքից դուրս բերելը սկզբում պահանջել են ՀՀ ԶՈՒ ԹՎ վերոհիշյալ աշխատակիցները, սակայն ցույց չեն տվել այն վայրը, որտեղ պետք է կատարվեր աշխատանքները: Քանի որ 200խմ տարողությամբ ռեզերվուարները չի թույլատրվում ամբարձիչով բարձրացնել և տեղափոխել տարածքից դուրս, հետևաբար մենք հատակի փոխարինման աշխատանքները պետք է կատարեինք իրենց տեղերում: Այդ ժամանակ համապատասխան զորամասերի հրամանատարներն ինձ բացատրեցին, որ իրենք չեն կարող առանց վերադասի գրավոր թույլտվության թույլ տալ մեր աշխատակիցներին զորամասի տարածքում իրականացնել եռակցման և այլ էլեկտրական գործիքներով հղկման, թիթեղների կտրման ծառայություններ, քանի որ ռեզերվուրները իրարից գտնվում են մի քանի մետր հեռավորության վրա, վտանգավոր է աշխատանքների կատարումը:

Թեև Պայմանագրով նախատեսված է, որ անվտանգության պայմանները պետք է իրականացնի կազմակերպությունը, սակայն կազմակերպության աշխատակիցների հետ չի տարվել ոչ մի բացատրական աշխատանք՝ հետագա արտառոց դեպքերից խուսափելու համար:

Կցանկանայի նշել նաև, որ վերադասը նախապես պետք է տար իր գրավոր թույլտվությունը տվյալ զորամասերի հրամանատարներին, որ տվյալ տարածքում մեզ թույլատրեին կատարել եռակցման և այլ էլեկտրական գործիքներով հղկման, թիթեղների կտրման ծառայություններ:

Հետևաբար այդ աշխատանքների թույլտվությունը ստանալու համար մեր նախաձեռնությամբ 05.11.2018թ. թիվ 2018-134 գրությամբ խնդրել էինք ՀՀ պաշտպանության նախարարի տեղեկալ Մ.Ղամբարյանի կարգադրությունը զորամասի հրամանատարներին, որպեսզի թույլ տային զորամասի տարածքում կատարել վերը նշված

աշխատանքները, սակայն Մ.Ղամբարյանի գրությունը մենք ստացել ենք միայն 20.11.2018թ. հետևաբար այդ ժամանակ եղանակային պայմանները թույլ չէին տալիս վերը նշված աշխատանքները կատարել, այդ իսկ պատճառով մենք աշխատանքները դադարեցրել ենք»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչ Լևոն Թադևոսյանը:

4. <u>ՍՑ-ԷՍ-2019/16 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 18.01.2019թ. թիվ 26-3/569-19 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության 14.01.2019թ. թիվ ԴՎԱ/57 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության և «Էմ Դի Էյջ» ՍՊԸ-ի միջև 23.05.2019թ. կնքված ՈԳՀԾՁԲ-7/5-1 և ՈԳՀԾՁԲ-7/6-1 գնման պայմանագրերը, «Էմ Դի Էյջ» ՍՊԸ-ի 08.02.2019թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնած դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարության և «Էմ Դի Էյջ» ՍՊԸ-ի միջև 23.05.2019թ. կնքված ՈԳՀԾՁԲ-7/5-1 և ՈԳՀԾՁԲ-7/6-1 գնման պայմանագրերը (այսուհետ՝ նաև Պայմանագրեր):

Պայմանագրերի՝

- 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:
- 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

• 3.1 կետի համաձայն՝ Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Էմ Դի Էյջ» ՍՊԸ-ի միջև 23.05.2019թ. կնքված ՊԳՀԾՁԲ-7/5-1 պայմանագրի 4.1 կետի համաձայն՝ նույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 19 520 000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, իսկ ՊԳՀԾՁԲ-7/6-1 պայմանագրի 4.1 կետի համաձայն՝ նույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 2 620 000 ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Պայմանագրերի 7.9 կետի համաձայն՝ Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Էմ Դի Էյջ» ՍՊԸ-ի միջև 23.05.2019թ. կնքված ՊԳՀԾՁԲ-7/5-1 պայմանագրի N1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Կապալառուի կողմից պետք է մատուցվեին հետևյալ անվանումներով ծառայություններ.

Հ/հ	Ծառայության անվանումը	Չ/մ
	200խմ տարողությամբ ուղղաձիգ տարողությունների նորոգման ծառայություն	
1	Տեխնիկական վիճակի արատաորոշում՝ ուլտրաձայնային (մեթոդով) ստուգման ծառայություն /ծառայությունների մատուցման սկզբում և ավարտից հետո	տեղայ ին
2	**Ե/բետոնե աշխատանքներ**	

2.1	Ե/բետոնե բարձակի մասնակի նորոգում 10սմ հաստությամբ քանդման և հատակի վերջնական լցոնում /միաձույլ բետոն B 22.5 դասի/	խմ
3	**Շերտերի մաքրման և նորով պատման ծառայությունների ընթացքում փոխարինման ենթակա միջոցներ**	
3.1	Ամրան Ա500С-16	տ
3.2	Ամրան Ա500С-10	տ
3.3	Ամրան Ա500С-8	տ
4	**Մաքրման և ներկման ծառայություններ**	
4.1	ներքին մակերևույթի տանիքածածկի, պատերի, հատակի և առաստաղի մետաղական թիթեղի մաքրում նստվածքներից ձեռքով /չոր ավազ 0.2-2.0մմ/	քմ
4.2	ներքին մակերևույթի տանիքածածկի, առաստաղի, պատերի, հատակի մետաղական թիթեղի ներկման ծառայություն 2 անգամ՝ էպոքսիդային հիմքով ներկով /«Полак ЭП-21» ТУ-2313-002-2421693 կամ համանման/	քմ
4.3	արտաքին մակերևույթի տանիքածածկի, պատերի, աստիճանի մետաղական թիթեղի ներկման ծառայություն 1 անգամ՝ էբոքսիդային բիտում-ռեզինային և բիտում-պոլիմերային հիմքով /գույնն ընտրելիս պետք է հաշվի առնել լուսային ճառագայթի անդրադարձման միավորի նորման/	քմ
5	**Նորոգման ծառայություններ**	
5.1	Տարողությունը ամբարձիչով բարձրացում և տեղափոխում 300մ (տարածքից դուրս) և տեղադրում	հատ
5.2	Արատորոշումից հետո մետաղական ամբարի տանիքի, հատակի, առաստաղի և պատերի մասնակի փոխարինում 5մմ հաստությամբ երկաթյա թիթեղով	տ
5.3	Մետաղական ամբարի հատակի փոխարինում 6մմ հաստությամբ երկաթյա թիթեղով ամբողջությամբ	տ
5.4	եռակցման հորիզոնական և ուղղահայաց կարերի արատաորոշման ծառայություն	գմ
5.5	մետաղական աստիճանի ապամոնտաժում	հատ
5.6	մետաղական աստիճանի մոնտաժում	հատ
6	**Խողովակների, դիտանցքների վերանորոգման ծառայություն**	
6.1	Φ50մմ վնասված մետաղական խողովակների փոխարինում նորով որում կարիքը կա	մ
6.2	Φ50մմ վնասված մետաղական սողնակ փականի փոխարինում նորով	հատ
6.3	Φ600մմ մետաղական դիտանցքի ապամոնտաժում պատերից	հատ
6.4	Φ600մմ մետաղական դիտանցքերի մոնտաժում	հատ
6.5	Մ30մմ մետաղական վնասված հեղյուսների և մանեկների փոխարինում նորով	հատ

Ընդ որում, Ծառայությունը պետք է մատուցվի ք.Գավառում և աշխատանքների կատարման ժամկետ է նախատեսվել՝ Պատվիրատուի հանձնարարականների հիման վրա 2018թ. ընթացքում, բայց ոչ ուշ քան 30.11.2018թ.:

ՀՀ պաշտպանության նախարարության և «Էմ Դի Էյջ» ՍՊԸ-ի միջև 23.05.2019թ. կնքված ՈԳՀԾՁԲ-7/6-1 պայմանագրի N1 հավելվածով ահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ Կապալառուի կողմից պետք է մատուցվեին հետևյալ անվանումներով ծառայություններ.

Հ/հ	Ծառայության անվանումը	Չ/մ
	50 և 75 խմ տարողությամբ հորիզոնական տարողությունների նորոգման ծառայություն	
1	Տեխնիկական վիճակի արատաորոշում՝ ուլտրաձայնային (մեթոդով) ստուգման ծառայություն /ծառայությունների մատուցման սկզբում և ավարտից հետո	տեղայ ին
2	**Մաքրման և ներկման ծառայություններ**	
2.1	ներքին մակերևույթի պատերի մետաղական թիթեղի՝ նստվածքներից ձեռքով մաքրման ծառայություն /չոր ավազ 0.2-2.0մմ/	քմ
2.2	արտաքին մակերևույթի պատերի մետաղական թիթեղի ներկման ծառայություն 1 անգամ՝ էբոքսիդային բիտում-ռեզինային և բիտում-պոլիմերային հիմքով /գույնն ընտրելիս պետք է հաշվի առնել լուսային ճառագայթի անդրադարձման միավորի նորման/	քմ
3	**Նորոգման ծառայություններ**	
3.1	Տարողությունը ամբարձիչով բարձրացում և տեղափոխում 300մ (տարածքից դուրս) և տեղադրում	հատ
3.2	Արատորոշումից հետո մետաղական ամբարի տանիքի, հատակի, առաստաղի և պատերի մասնակի փոխարինում 5մմ հաստությամբ երկաթյա թիթեղով	տ
3.3	եռակցման հորիզոնական և ուղղահայաց կարերի արատաորոշման ծառայություն	գմ
4	**Խողովակների, դիտանցքների վերանորոգման ծառայություն**	
4.1	Φ50մմ վնասված մետաղական խողովակների փոխարինում նորով որում կարիքը կա	մ
4.2	ՌՈՒ 6, 10, 16մմ վնասված մետաղական սողնակ փականի փոխարինում նորով	հատ
4.3	Φ750մմ մետաղական դիտանցքի ապամոնտաժում և մոնտաժում	հատ
4.4	Φ600մմ մետաղական դիտանցքերի ապամոնտաժում և մոնտաժում	հատ
4.5	Մ17, 19մմ մետաղական վնասված հեղյուսների և մանեկների փոխարինում նորով	հատ

Ընդ որում, Ծառայությունը մատուցվելու է ք. Գավառում և աշխատանքների կատարման ժամկետ է նախատեսվել՝ Պատվիրատուի հանձնարարականների հիման վրա 2018թ. ընթացքում, բայց ոչ ուշ քան 30.11.2018թ.:

Ընկերությունը 05.11.2018թ. թիվ 2018-134 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալին՝ խնդրելով տալ համապատասխան հանձնարարական ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությանը, որպեսզի Ընկերության աշխատակիցներին թույլատրվի մուտք գործել ք. Գավառում գտնվող զորամասի տարածք, Պայմանագրով նախատեսված վերանորոգման ծառայությունների մատուցումը սկսելու համար:

Ի պատասխան վերը նշված գրության, Պատվիրատուն 16.11.2018թ. գրությամբ հայտնել է, որ համաձայն ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության հավաստման, Ընկերության աշխատակիցները հունիսի 26-ից սկսած՝ առանց որևէ խոչընդոտի մուտք են գործում տվյալ զորամաս: Հաշվի առնելով վերանորոգվող տարողությունների խիստ անհրաժեշտությունը, պատվիրատուն առաջարկել է մինչև նոյեմբերի 30-ը կարգավորել վերանորոգման աշխատանքների ընթացքը, այլապես Պատվիրատուի կողմից կձեռնարկվի Պայմանագրերի միակողմանի լուծման գործընթաց:

ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալին ուղղված գրությամբ ՀՀ ԶՈՒ թիկունքի պետ-վարչության պետը տեղեկացրել է, որ 2018թ. դեկտեմբերի 4-ի դրությամբ «Էմ Դի Էյջ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար թերի մատուցված ծառայությունները հետևյալն են.

23.05.2018թ. կնքված ՈԳՀԾԶԲ-7/5-1 և ՈԳՀԾԶԲ-7/6-1 պայմանագրերի համաձայն կազմակերպության կողմից ս.թ. հունիսի 11-ից պետք է իրականացվեին հորիզոնական և ուղղաձիգ տարողությունների նորոգման աշխատանքներ 95414 զորամասի ՎՊԱԲ-ում /ք. Գավառ/, որի համար ս.թ. հունիսի 6-ին «Էմ Դի Էյջ» ՍՊԸ-ին ուղարկվել են N1 և N2 հանձնարարականները, իսկ հուլիսի 12-ին և օգոստոսի 30-ին հիշեցումներ և նախազգուշացում, սակայն մինչ օրս ոչ մի աշխատանք չի իրականացվել և տարբեր անհիմն պատճառաբանություններ են բերվել աշխատանքի չկատարումն արդարացնելու համար: ՀՀ ԶՈՒ թիկունքի պետ-վարչության պետն առաջարկել է միակողմանի լուծել վերը նշված պայմանագրերը:

ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի ԹԱ վարչության պետը ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալին 25.12.2018թ. ներկայացված զեկուցագրով հայտնել է, որ պատասխանատու ստորաբաժանման կողմից առաջարկվել է, հիմք ընդունելով պայմանագրերի 2.1.3 կետի «բ» ենթակետի պահանջները, սկսել միակողմանի լուծման գործընթաց՝ ՀՀ ՊՆ և «Էմ Դի Էյջ» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրերի մասով: Վերջինս առաջարկել է պայմանագրերը միակողմանի լուծել՝ 04.12.2018թ. դրությամբ:

«Էմ Դի Էյջ» ՍՊԸ-ի տնօրեն Դ. Մխեյանին ուղղված 28.12.2018թ. թիվ ԴՎԱ/5335 գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Պայմանագրերի շրջանակներում Ընկերության կողմից 2018թ. տարողությունների նորոգման ծառայություններ մատուցելու ընթացքում խախտվել են վերոնշյալ պայմանագրերով սահմանված ժամկետները, հիմք ընդունելով Պայմանագրերի 2.1.3 կետի «բ» ենթակետի պահանջները, ՀՀ պաշտպանության նախարարությունը լուծել է ՈԳՀԾՁԲ-7/5-1 և ՈԳՀԾՁԲ-7/6-1 պայմանագրերը:

Պայմանագրերի միակողմանի լուծման վերաբերյալ ծանուցումները Պատվիրատուի կողմից 08.01.2019թ. հրապարակվել է նաև www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում:

Ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ «Էմ Դի Էյջ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունների սահմանված ժամկետում չկատարման պատճառ են հանդիսացել Պայմանագրերով նախատեսված ծառայությունների մատուցման ընթացքում առաջացած բազմաթիվ օբյեկտիվ խոչընդոտները, որոնք թույլ չեն տվել Ընկերությանը նախատեսված աշխատանքները ժամանակին հասցնել ավարտին: Մասնավորապես, Ընկերության ներկայացուցիչը նշեց, որ 2018թ. օգոստոսի 1-ից ամբողջ հզորությամբ սկսել է Պայմանագրերով նախատեսված աշխատանքների կատարումը, կատարվել են ՈԳՀԾՁԲ-7/5-1 և ՈԳՀԾՁԲ-7/6-1 պայմանագրերով նախատեսված արատորոշման՝ ուլտրաձայնային մեթոդով ստուգման, եռակցման հորիզոնական և ուղղահայաց կարերի արատորոշման ծառայությունները, ինչից հետո Ընկերությունը բանավոր տեղեկացրել է ՀՀ ՋՈՒ ԹՎ և Վ ծառայության պետին և զորամասերի հրամանատարներին, որ Ν ԳՀԾՁԲ-7/5-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում պետք է փոխարինվեն թվով 6 հատ 200խմ տարողությամբ ռեզերվուարների հատակներն ամբողջությամբ, իսկ ԳՀԾՁԲ-7/6-1 ծածկագրով պայմանագրի շրջանակներում պետք է կատարվեն 50խմ և 75խմ ամբարների կողային մասերի թիթեղների հղկման աշխատանքներ: Ընկերության ներկայացուցիչը համոզմունք հայտնեց, որ նշված բոլոր աշխատանքները պետք է կատարվեին զորամասի տարածքում, քանի որ գոյություն ունեցող բոլոր ստանդարտներով 200խմ տարողությամբ ուղղաձիգ տարողությունները հնարավոր չէր ամբարձիչով բարձրացնել և տրանսպորտային միջոցներով տեղափոխման ենթարկել: Ընկերությունը նշեց, որ ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչության աշխատակիցները պահանջել են ռեզերվուարները տարածքից դուրս բերել, սակայն ցույց չեն տվել այն վայրը,

որտեղ պետք է կատարվեին թիթեղապատման աշխատանքները: Քանի որ 200խմ տարողությամբ ռեզերվուարները չի թույլատրվում ամբարձիչով բարձրացնել և տեղափոխել տարածքից դուրս, հետևաբար Ընկերությունը ռեզերվուարների հատակի փոխարինման աշխատանքները ստիպված էր կատարել իրենց տեղերում: Համապատասխան զորամասերի հրամանատարները Ընկերությանը հայտնել են, որ չեն կարող առանց վերադասի գրավոր համաձայնության թույլ տալ Ընկերության աշխատակիցներին զորամասի տարածքում իրականացնել եռակցման և այլ էլեկտրական գործիքներով հղկման, թիթեղների կտրման ծառայություններ, քանի որ ռեզերվուարները գտնվում են իրարից մի քանի մետր հեռավորության վրա, և նշված աշխատանքների կատարումը անվտանգության նկատարումներից ելնելով անթույլատրելի է: Աշխատանքները կատարելու թույլտվությունը ստանալու համար Ընկերությունը 05.11.2018թ. թիվ 2018-134 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարի տեղեկալին, խնդրելով վերջինիս կարգադրությունը զորամասի հրամանատարներին, որպեսզի թույլատրվի զորամասի տարածքում կատարել վերը նշված աշխատանքները: Սակայն ՀՀ պաշտպանության նախարարի տեղեկալի պատասխան գրությամբ տրված թույլտվությունը Ընկերությունը ստացել է միայն 20.11.2018թ., այսինքն, այն ժամանակ, երբ եղանակային պայմանները թույլ չէին տալիս ավարտին հասցնել վերը նշված աշխատանքները, քանի որ եռակցումից հետո պետք է կատարվեր նաև էպոկսիդային նյութով ներկման աշխատանք, ինչը, համաձայն ՈԳՀԾՁԲ-7/5-1 պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսված՝ ««Полак ЭП-21» ТУ-2313-002-2421693» հակակոռոզիոն էպոքսիդային էմալի տեխնիկական բնութագրի, հնարավոր է կատարել բացառապես +15-ից +30°C ջերմաստիճանային պայմաններում, այդ իսկ պատճառով Ընկերության կողմից աշխատանքների կատարումը դադարեցվել է:

Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձի ուշադրությունը հրավիրեց նաև այն հանգամանքի վրա, որ ըստ Պայմանագրերում նախատեսված պայմանի՝ Ծառայությունը պետք է մատուցվեր ք. Գավառում՝ Պատվիրատուի հանձնարարականների հիման վրա և աշխատանքների կատարման ժամկետ է նախատեսվել՝ 2018թ. ընթացքում, բայց ոչ ուշ քան 30.11.2018թ.: Այս կապակցությամբ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ Ընկերությունը Պատվիրատուի կողմից Պայմանագրի կատարման ողջ ընթացքում որև հանձնարարական չի ստացել:

Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացրեց ՈԳՀԾՁԲ-7/5-1 պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսված՝ ««Полак ЭП-21» ТУ-2313-002-2421693» հակակոռոզիոն էպօքսիդային էմալի տեխնիկական բնութագրերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 6-րդ հոդվածի՝

- 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.
- 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- ՀՀ պաշտպանության նախարարության և «Էմ Դի Էյջ» ՍՊԸ-ի միջև 23.05.2019թ. կնքված ՈԳՀԾՁԲ-7/5-1 և ՈԳՀԾՁԲ-7/6-1 գնման պայմանագրերը, որոնց կատարման ժամկետ է սահմանվել՝ Պատվիրատուի հանձնարարականների հիման վրա 2018թ. ընթացքում, բայց ոչ ուշ քան 30.11.2018թ.:

-Պայմանագրերով նախատեսվել է, որ Ընկերությունը ի թիվս այլ ծառայությունների պետք է կատարեր.

-տարողությունների ամբարձիչով բարձրացում և տեղափոխում 300մ (տարածքից դուրս) և տեղադրում,

- մետաղական ամբարի տանիքի, հատակի, առաստաղի և պատերի մասնակի փոխարինում 5մմ հաստությամբ երկաթյա թիթեղով:

- արտաքին մակերևույթի պատերի մետաղական թիթեղի ներկման ծառայություն 1 անգամ՝ էբոքսիդային բիտում-ռեզինային և բիտում-պոլիմերային հիմքով:

- Ընկերությունը՝ պատճառաբանելով, որ ռեզերվուարները հնարավոր չէ ամբարձիչով բարձրացնել և տեղափոխել տարածքից դուրս, 05.11.2018թ. դիմել է ՀՀ պաշտպանության նախարարի տեղեկալին, խնդրելով վերջինիս կարգադրությունը զորամասի հրամանատարներին, որպեսզի թույլատրվի զորամասի տարածքում կատարել մետաղական ամբարի տանիքի, հատակի, առաստաղի և պատերի մասնակի փոխարինման աշխատանքները (այդ թվում՝ եռակցումը):

- 16.11.2018թ. թվագրված՝ ՀՀ պաշտպանության նախարարի տեղեկալի կողմից վերը նշված գրության պատասխանը Ընկերությունը ստացել է 20.11.2018թ.:

- Ըստ Պայմանագրերում նախատեսված պայմանի՝ Ծառայությունը պետք է մատուցվեր ք. Գավառում՝ Պատվիրատուի հանձնարարականների հիման վրա և աշխատանքների կատարման ժամկետ է նախատեսվել՝ 2018թ. ընթացքում, բայց ոչ ուշ քան 30.11.2018թ.:

-Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ Ընկերությունը Պատվիրատուի կողմից Պայմանագրերի կատարման ողջ ընթացքում աշխատանքներն իրականացնելու որևէ հանձնարարական չի ստացել:

- ՀՀ պաշտպանության նախարարության և «Էմ Դի Էյջ» ՍՊԸ-ի միջև 23.05.2019թ. կնքված ՈԳՀԾՁԲ-7/5-1 և ՈԳՀԾՁԲ-7/6-1 գնման պայմանագրերը Պատվիրատուի կողմից միակողմանի լուծվել են և Պայմանագրերի միակողմանի լուծման վերաբերյալ ծանուցումը 08.01.2019թ. հրապարակվել է www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Էմ Դի Էյջ» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրով նախատեսված ծառայությունների չկատարումը պայմանավորված է եղել նրանով, որ Պատվիրատուի կողմից Պայմանագրերի կատարման ողջ ընթացքում աշխատանքներն իրականացնելու որևէ հանձնարարական Ընկերությանը չի տրվել և վերը նշված

աշխատանքները տեղում կատարելու թույլտվությունը Պատվիրատուի կողմից Ընկերությանը տրամադրվել է 20.11.2018թ., այսինքն, այն ժամանակ, երբ եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով Ընկերությունն օբյեկտիվորեն հնարավորություն չուներ ավարտին հասցնելու Պայմանագրերով նախատեսված աշխատանքները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Էմ Դի Էյջ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 18.01.2019թ. թիվ 26-3/569-19 գրությամբ «Էմ Դի Էյջ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02250199) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ